

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ սոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւարանիւր բառին 2 կոպէկ:
Տէլէֆօն № 253.

Հայրապետ, Ոսկի, Միսա, Գէորգ եւ Առաքել Աւետիսեանները ցաւօք սրտի
յայտնում են ազգականներին եւ ծանօթներին իրանց կողմը:

ԿԱՐԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՆԻԵՏԻՍԵԱՆՅԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսոյս 8-ին Վերին-Ագուլիսում: Հոգեհանգիստը կը կատարվի
կիրակի օրը, ամսին 23-ին, Մոզնու ս. Գէորգ եկեղեցում ս. պատարագից յետոյ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մրցելու ընդունակութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արձազանքներ. Նամակ երեւանից.
Նամակ Շուշու գաւառից. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Զինական գործեր. Արտաքին լուրեր.—
ՆԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն:

ՄՐՑԵԼՈՒ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Այն հանգամանքը, որ չինացիները շատ
են թւում, որ նրանք աշխատասէր ժո-
ղովուրդ են, որ նրանք քիչով բաւականա-
ցող եւ սակաւագէտ մարդիկ են եւ որ
նրանք էժման վարձատրութեամբ աշխա-
տող բանուորներ են, դարձնում են նրանց
ազգերի մրցութեան ասպարէզում ուժեղ
եւ անընկճելի մի տարր:

Յայտնի է, որ չինական բանուորները Ա-
մերիկայում այսպիսի էժման գնելով հա-
մաձայնում էին բանին, որ ամերիկական
բանուոր դասակարգի մէջ սկսվեց մի ընդ-
հանուր հակահրապարակութիւն ու թշնամութիւն
դէպի այդ տարրը եւ սահմանափակվեց չի-
նացի բանուորների մուտքը դէպի Միա-
ցեայ-Նահանգները: Նոյն երեւոյթը նկատ-
վում է եւ ուրիշ տեղերում: Միւրիւր սահ-
մանադրի վրա, որտեղ աշխատում են մեծ
բազմութեամբ չինացիներ, ոչ ոք չէ կա-
րողանում մրցել նրանց հետ էժման օրա-
վարձի պատճառով: Միւնդեռ ռուս բան-
ուորը պահանջում է օրական 80—90 կո-

պէկ, մի ռուբլի եւ աւելի օրավարձ, չինա-
ցիները համաձայնում են վերցնել այդ
վարձատրութեան կէսը, քառորդ, վեցերորդ
մասը, երբեմն եւ աւելի պակաս: Կապալա-
ռուներին աջողվում է վարձել չինացիներին
տարեկան 34—40 ռուբլիով, որ անում է
ամսական մօտ 3 ռուբլի: Նաւային բեռ-
նակրութեան համար ռուս բանուորը վերց-
նում է պուլին 5, իսկ չինացին 2½ կո-
պէկ: Ռուսը իր ստացածը իսկոյն վատ-
նում է եւ չը նայելով իր մեծ օրավարձին
դարձեալ աղքատ է եւ անփող, իսկ չինա-
ցին շնորհիւ իր սակաւագետութեան՝ կա-
րողանում է իր չնչին վարձատրութիւնից
մի որոշ գումար յետ գցել եւ տանել վերա-
դարձին իր հետ հայրենիք:

Չինացի բանուորները դարձել են Միւրի-
ւր համար շատ ցանկալի եւ ձեռնառու բան-
ուորներ: Նոր չինացի մանջուրեան եր-
կաթուղու գծի վրա բանում էին մինչեւ
ներկայ խառնակութիւնների սկսվելը 200
հազարից աւելի չինացիներ: Շատ լարմար են
եւ անփոխարինելի չինացիները մանաւանդ
երկրագործական մանրակրկիտ աշխատանք-
ների, բանջարանոցներում եւ պարտէզներում
կատարվող նուրբ գործերի մէջ: Չինացիները
ամենամեծ խնամքով մշակում եւ պարար-
տացնում են հողը, նուիրելով այդ գործին
ձեռքի մեծ աշխատանք, եւ ստացած ար-
դիւնքները ծախում են աւելի էժման, քան
միւս ազգութիւններին պատկանող երկ-
րագործները:

ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Պրօպագանդայի տպարանի հայերէն բաժինը
սկսելով շատ աղքատիկ գործունէութիւն ու-
նեցաւ: Եթէ տարի լուրջ յետոյ, նա 1830-ին
տպագրեց Առաւել պարզաբանութիւն քրիս-
տոնական վարդապետութեան անունով կրօ-
նական գիրքը, որ թարգմանված էր ֆրանսի-
ական Պօզուս-Պետրոս հայ քահանայի ձեռքով:
Այնուհետեւ գալիս է աւելի երկար ընդմիջում:
Տպարանը մի քիչ ետանդ ցոյց է տալիս XVII
դարի կէսից, բայց հաւատարիմ մնալով մի եւ
նոյն նեղ կրօնական-դասանաբանական ուղղու-
թեան: Կաթօլիկութեան տարածման համար
հաստատված այս բարձր աստիճանը արժան էր
համարում, որ ամեն կողմից զրկված հայը իր
մայրենի լեզուով մի քիչ լայն ու բազմակող-
մանի կրթութիւն ստանայ:

Մենք ստացինք որ լատին կրօնաւորները
գիտական նպատակով ուսումնասիրում էին
հայոց լեզուն: Շատ չէ այդպիսիների թիւը.
եւ առաջինը, որ իր աշխատութիւնների պը-
տուղները հրատարակեց տպագրութեամբ, կա-
նոնիկոս Ֆրանցիսկո Րիօլայն է: 1624 թ.ին
նա Միւսում հրատարակել էր հայերէն լեզուի
քերականութիւնը լատինական լեզուով եւ այդ
ժամանակ էլ խոստացել էր շուտով լոյս հա-
նել եւ իր կազմած հայ-լատիներէն բառարա-
նը: Այս աշխատութիւնը, իրաւ, լոյս տեսաւ
1633-ին, բայց այն անգամ Պարիզում, ուր
արքեպիսկոպոս տպարանը ձեռք էր բերել հայե-
րէն տառեր եւ առհասարակ աշխատում էր
արեւելեան լեզուներով հրատարակութիւններ

անել, որպէս զի այդ միջոցով Ֆրանսիայի աղ-
ղեցութիւնը տարածվի Արեւելքում: Բիօլայի
բառարանը բազմաթիւ պակասութիւններ ունի,
բայց եւ այդպէս, պիտի համարվի երախտա-
գիտութեան արժանի մի գործ: Կազմել հայե-
րէն լեզուի բառարան այն ժամանակներում,
երբ չը կար այդպիսի փորձ հայերի մէջ—ան-
կասկած մի անձագործութիւն է մանաւանդ մի
օտար մարդու նկատմամբ: Այդ աշխատու-
թիւնը ցոյց էր տալիս թէ եւրօպական կրթու-
թեան տեղ մարդիկ շատ բարեարարութիւններ
կարող էին անել Արեւելքի խեղճ քրիստոնեա-
ներին, եթէ նրանց առաջին եւ ամենակարեւոր
նպատակը կրօնական որոտորութիւնը չը լինէր:
Դժբախտաբար, կաթօլիկ կրօնաւորը կարծում
էր թէ հայը, նեատօրականը, զպտին միանգա-
մայն երջանկութեան կը հասնեն, եթէ, օրի-
նակ, պատարագի ժամանակ ջուր խառնեն բա-
ժակի հետ եւ կամ մի այլ ծիսակատարութեան
մէջ հետեւեն Հոմի հրահանգներին: Արարո-
ղութիւններով կաթօլիկ, բայց հոգով ու մտքով
խաւար ասիայի—այսպիսի հօտ էր հարկաւոր
արեւմտեան եկեղեցականներին:

V

Մենք հասանք XVII դարի համարեա կէ-
սին, յիշատակելով այն բոլոր հրատարակու-
թիւնները, որոնք լոյս տեսան այդ ժամանա-
կամիջոցում: Որքան յուսահատ դանդաղորու-
թեամբ է առաջ գնում հայկական տպագրու-
թիւնը:

Նրա սկզբնաւորութիւնից արդէն հարիւր
տարուց աւել է անցել, բայց, ինչպէս տես-
նում էք, նա դեռ եւս պատահական, անհաս-
տատ բան է, դեռ թափառում է Եւրօպայի
զանազան քաղաքներում եւ գործում է շատ
թոյլ, երկար ընդհատումներով: Ի վերջոյ միա-
ցել են երկու օտար հիմնարկութիւններ, որոնք

Այդպիսով չինացիները ներկայանում են
իրրեւ մի տոկոս, դիմացկուն, ձեռնառու
տարր, որ ունենալով գործնական առաւել-
ութիւններ միւս ազգութիւնների վրա,
դառնում է մրցութեան մէջ յաղթող: Կն-
չով էլ վերջանալու լինեն չինական ներկայ
խոռովութիւնները չինական տարրը կը մնայ
նոյն տոկոս եւ էժման բանուոր տարրը,
որ ձեռնառու լինելով շրջապատողների հա-
մար, պէտք է օրէցօր աւելի եւ աւելի
սփռվի իր երկրից դուրս գտնվող տե-
ղերում, ընդարձակելով չինական տարրի
բռնած տարածութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

IV

Ջանչանի մահը յիշեցնել էր մի հատուած
Բրանդսից, մի գեղեցիկ հատուած, որ թոյլ
եւ տալիս էր մեծ անդրադարձնել այստեղ:
Խօսելով Շէլլի մասին, Բրանդս գրում է.
«Ինչ որ մի բրօնիէր համար Րօբինզօն Կրու-
զօի հեղինակ Դէֆօին դատապարտեցին նա-
ւակութեան Պէտք է ակնհայտ կարէին եւ
յետոյ կապէին նաւակութեան արժեքը: Դա-
տալիս ի կատար ածվեց: Այն ժամանակ
յանցապարտին սիւնից կապելիս՝ գլուխն անց
էին կացնում սիւնի ծակի միջով ու այնպէս
ամրացնում, որ անշարժ մնայ, եւ այնուհետեւ
մասնում էին նրան ամբօխի նաւակութեան.
ամբօխ սովորաբար կոծում էր յանցապարտին
փոստ խնամքներով, զեանքներով, նա-
րինքներով: Եւ այն: Բայց երբ լոյսը բացվեց
եւ Դէֆօի գունաթափ, այլակերպված, արիւ-
նաթափաւ դէմքը սկսեց սիւնից ներքեւ նա-
յիլ ամբօխի վրա, յանկարծ տիրեց մեռելային
լուծութիւն: Ոչ ոք ոչ մի հատ խնամք չը գցեց,
ոչ ոք ոչ մի անարգական խօսք չարտասանեց:
Ամենքն էլ կը ճանաչում էին, թէ ինչ մարդ
է Դէֆօն: Այն ժամանակ մէկն ամբօխի միջից
խնդրեց, որ իրան բարձրացնեն, եւ պակի դը-
րեց Դէֆօի այլանշանված ճակատին:
«Մտառը պատանի էի, աւելացնում է Բրան-

դէս, երբ կարգացի այդ պատմութիւնը, սա-
կայն այդ պատկերը խոր դրոշմվեց հոգուս մէջ,
եւ ես մտածեցի, թէ իսկ եւ իսկ այդպիսի ար-
տաքին տեսք պէտք է ունենայ ճշմարտութիւ-
նը: Ես մտածեցի.—Եթէ մի մարդ երբ եւ ինչ
գտնի խեղճ, արհամարջված եւ ամենքից ան-
արգելող ճշմարտութիւնը՝ կապված նաւակու-
թեան սիւնից, մեծ եւ վեհ կը լինի նրա կեան-
քում այն վայրկեանը, երբ նա կարողանայ մօ-
տենալ նաւակվող ճշմարտութեանը եւ պակի
դնի նրա ճակատին»:

Այդպիսի երկու դէպքի հանդիպեց իր կեան-
քում Ջանչան, եւ երկու դէպքումն էլ աներկ-
միւր բարձրացաւ ու պակից անարգելող ճըշ-
մարտութիւնը:

Կար ժամանակ, երբ Ռուսաստանում սար-
սափելի բէկաղիւս էր սկսվել Ալէքսանդր II-ի
բէֆօրմների դէմ եւ երբ յաղթական յետադիմ-
ները ամեն կողմից փոստ խնամքներ էին նե-
տում նաւակութեան սիւնից կապված բէ-
ֆօրմների վրա: Ջանչան բարձրացաւ սիւնի
գլուխը եւ պակից բէֆօրմների ճակատը «ИЗЪ-
ЭПОХИ ВЕЛИКИХЪ РЕФОРМЪ» գրքով:

Անցաւ մի ժամանակ: Եկան հայկական սար-
սափները, երբ կարելի էր բացալանչել ռուս
բանաստեղծի խօսքերով.

«Опять Востокъ дымятся свѣжею кровью.

Опять рѣзая, повсюду вой и плачь!

И снова правъ пирующій палачъ,

А жертвы преданы злословью».

Մի ամբողջ ժողովուրդ, յօշոտված, այլա-
կերպված եւ արիւնաթափաւ, կապված էր նը-
շաւակութեան սիւնից:

Այդ այն ժողովուրդն էր, որի մարմնից եւ
արիւնից էր ինքը Ջանչան, եւ որից խորթա-
ցել էր նա հանգամանքների բերմամբ:

Տեսաւ Ջանչան այդ պատկերը, խօսեց հա-
րազատ արիւնը նրա երակներում, եւ նետվեց
նա պակից այդ նահատակի ճակատը:

Ռուսաց գրականութեան ամենաշատ ներկա-
յացողներէն էր ձեռքով էր հիւսված այդ պատկը,
եւ «Братская помощь» էր այդ պակի անունը:

Երկու անգամ պակից Ջանչան ճշմարտու-
թեան ճակատը լուսաւոր պակով, եւ ամեն
անգամ նրա սեփական դէմքը երեւաց հասա-

տպագրութեան մասին: Մեղքիւթիւն յաջորդեց
նրա եղբորորդի Սահակը, որ պարտք համարեց
իր տխրահռչակ հօրեղբօր մի հարազատ կտորը
մնալ. նոյնպէս չըջապատված պարսիկ հարկա-
հաններով, նոյնպէս աստանդական ժողովու-
րդի արիւնը ծծելու համար եւ նոյնպէս
անարգված ժողովուրդից: Բայց Սահակ եր-
կար չը կարողացաւ իր քաղաքագործութիւննե-
րը ցոյց տալ Հայ ժողովուրդի մէջ արդէն այն-
քան գիտակցութիւն եւ ոյժ էր հաւաքվել, որ
նա կարողանում էր զիմարել ու պատժել
գոնէ իր վեղարաւոր խաներին: Եւ այդ սան-
ձահարող գիտակցութիւնը գալիս էր զլիւսաւո-
րապէս նոր Ջուղայից, որ արդէն կազմակերպ-
վել էր իրրեւ համայնք, հաստատուն հիմքերի
վրա էր դրել իր բարեկեցութիւնը եւ շնորհիւ
իր հարստութեան, իր վայելած արտօնութիւն-
ներին, նախկինից աւելի մեծ անուն եւ հեղի-
նակութիւն էր ձեռք բերել հայերի, գոնէ
պարսկական բաժնի հայերի մէջ: Նա էր, որ
կաթօլիկոսական աթոռի վրա գրեց բարեխղճ,
չինարար Մովսէսին. նա էր, որ յամառու-
թեամբ չուզեց ընդունել Սահակին, որ եւ է
կերպով աշակցել նրան: Եւ Սահակը հարկա-
ղբված էր փախչել Օսմանեան երկրից, որ
աշխատում էր կաշառներ տալով եւ հարկեր
խոստանալով միջոցով կաթօլիկոս դառնալ
թիւրքահայերի վրա, բայց խայտառակվեց, մեծ
վէճերի հրամանով սաստիկ ծեծ կերաւ եւ հա-
զի ազատվելով մահից, գնաց էլմիաձնի խո-
ցերում իր մեղքերը ապաշխարութեամբ քա-
ւելու իրրեւ մի պարզ միաբան:

Ջուղան արդում էր ոչ միայն այն պատճա-
ռով, որ հարուստ էր եւ ինքնավար, այլ եւ
այն պատճառով, որ ներկայացում էր մի մոտա-
ւոր կենտրոն: Բնակութեան տեղ ստանալով
Մպահանի մօտ, Ջուղայիցիները չինացին Ամե-
նափրկչի վանքը: Հայաստանից այդտեղ էին

*) Հայկական Մատենադպրոցի լուսն, Վենետիկ, 1883, էր. 451:

բակտերիան՝ այդ լուսատու պատկերի շողքերում, շողքեր, որոնց հետքը անշնչ մնում է մի անգամ լուսաւորված դէմքերի վրա եւ շարունակում է վայել նոյն իսկ այն ժամանակ, երբ անհետանում են դէմքերը:

Այն, ինչ հոգեղէն էր Զանգեանի մէջ, երէկ յանձնվեց հոգին: Դէպքը չը կայ այլ եւս, բայց նրան լուսաւորող շողքը մնում է եւ կը մնայ միշտ, իբրեւ մի փարոս ալեմուսի կեանքի խաւար ծովափին:

Զանգեանը մեռաւ, բայց կենդանի է զաղափարը:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 8-ին

Նոր հունձը գուրս եկաւ. եւ ժողովրդի երեւակայութիւնից անհետացաւ այն կոշմարը, որը ծանրացել էր վերջին ամիսների ընթացքում արհեստական կերպով առաջացած թանգրութեան պատճառով: Մինչեւ անգամ այն ժամանակ, երբ հունձը արդէն սկսված էր եւ նոր ցորենը չուկայ էր բերվում՝ հացալվաճառ մաշակները դեռ յամուրթեմամբ շարունակում էին մեր ժողովրդին սարսափ ազդող հացի «բաւարանը», չը նայած որ առանց այն էլ խմոր եւ աւազախառն հացի լիտրը ծախվում էր 42 կոպէկով:

Եւ ահա շարունակվող անձրեւներից մի քանի օր անց, որոնք մի փոքր յետաձգեցին կարսեղը՝ նոր ցորենը միանգամից թափվեց չուկայ եւ հացի գինը չափաին կերպով ընկաւ. նոյն իսկ 26 րուբլով ցորեն ծախվեց Երեւանի չուկայում: Ցորեն գալիս էր մեծ քանակութեամբ եւ եկածը մնում էր չուկայում մէկերկու օրով, եւ չը նայած որ այդ օրերը եւ նոյն իսկ այժմ, մինչեւ յուլիսի 15-ը, հացը վաճառվել է լիտրը 38 կոպէկով: Բայց ցորենի այդ առատութիւնն ու էփանդութիւնը լիացրեց մեր խեղճ ժողովրդին:

Սարեւում դեռ հունձը չէ սկսվել, թէեւ ամեն տեղից եկող լուրերը շատ միջիթարական են. դաշտերը լաւ բերք տուին, իսկ սարերը, գոնէ առ այժմ, դաշտերից էլ շատ եւ շատ լաւ են խոտանում: Լինել, սակայն մի երկու օրվայ մէջ ցորենի գինը բաւական տատանվեց. այժմ 28—33 րուբլու սահմաններում է տատանվում ցորենի գինը: Պատճառը այն է, որ գաւառներից, գլխաւորապէս Նոր-Բայազետից եւ Դարաչիյակից, բաւական թւով ցորեն գնողներ են գալիս եւ վաստակելու նպատակով ցորեն տանում: Պատճառ էլ են, որ բայազետից բաւական թւով ցորեն գնողներ կան Իգդիրում եւ որ բաւականաչափ ցորեն է դուրս գնում թիւրքաց սահմանը: Այս արտահանութիւնը դեռ ժամանակաւոր բան է, մի ամիս եւս—եւ

փոխադրված բազմաթիւ գրքեր, այնպէս որ վաճառք այն ժամանակներում կարող էր Հայաստանի ամենահարուստ գրադարանը համարվել. իսկ Զուլայի առաջնորդ Սալաւուրը կենսաբան ամեն ջանք գործ էր դնում մի լաւ դպրոց դարձնել այդ գրադարանը: Դա նոյն Սալաւուրը վարդապետն էր, որ Լեւոնտանում էր իմացել թէ «վարեմ» բառը ինչ է—բայ թէ անուն: Նրա հետ էր մի երիտասարդ արեղայ, Սիմէոն անունով, որ նոյնպէս ենթարկվել էր լատին կրօնաւորների ծաղրին նոյն այդ տղիտութեան պատճառով: Վերադառնալով Էջմիածին, Սալաւուրն ու Սիմէոնը գտան այդտեղ Մկրտիչի անունով վարդապետին, որ մի շատ հետաքրքրական դէպք է իբրեւ մէկը այն սակաւթիւ անհատներից, որոնք զգում էին թէ տղիտութեան որպիսի թանձր խաւար է պատել հայոց աշխարհը եւ աշխատում էին մոտաւոր գործունէութեան սերմեր անկել այդ անապատում:

Տասն եւ հինգ տարուց ի վեր Մկրտիչի ճգնում էր Լիմ անապատում, ենթարկելով իրան ամեն անհասկ զրկանքների: Այդ ճգնութիւնը հոգու փրկութեան համար չէր, որովհետեւ վարդապետին տանջողը սատանայի եւ դժոխքի արհաւիրքները չէին, այլ մի ազնիւ մտածութիւն—թէ ինչպէս կարելի պիտի լինի վերականգնացնել այն գիտութիւնը, որ մի ժամանակ գոյութիւն ունէր հայերի մէջ: Այնքան մեծ ու ծանր հարց էր դա, որ Մկրտիչի, օրինակ ունենալով իր մի քանի ընկերակիցներին ու ուսուցիչին, շարունակ կարգում էր յունաց փիլիսոփաների թարգմանութիւնները, որոնց ստեղծ հասկանալի անգամ անհասկանալի էր դարձել հայ հոգեւորականութեան համար: Թանր ու ճնշող գործ էր նոյն իսկ այդ բանը. նա պահանջում էր անապատ համբերութիւն, մաշող աշխատութիւն եւ վարդապետը յօժարութեամբ նահապտակում էր իրան՝ այդ

ահա իւրաքանչիւր գաւառ կունենայ սեփական ցորեն: Սակայն կայ մի այլ հանգամանք, որ աւելի կարեւորութիւն ունի: Վերջին տարիների անբերրութեան պատճառով համարեաւ սպառվել է բոլոր մեր նահանգի պաշարը, հետեւապէս նաեւ անբարատէրների ունեցածը, այնպէս որ դատարկվել են այն բոլոր ամբարները, որոնք մի երկու տարի առաջ լի էին: Այժմ, երբ ցորենը առատ է, անշուշտ ամբարատէրները պիտի աշխատեն նորից ամբարել ցորենը, ոչ միայն փողով առնելով, այլ եւ գիւղացու պարտքերի փոխարէն նրա ցորենը խլելով: Շատ հասկանալի է, որ ամբարատէրները եւ գիւղերում բուն դրած չարքներն ու վախառուները օգտվելով այն նեղ դրութիւնից, որի մէջ գտնվում է մեր երկրագործը դասը, վերջին տարիների անբերրութեան պատճառով պիտի իրանց ձեռքը հաւաքեն մեծ քանակութեամբ ցորեն եւ այս տարվան պէս առատ տարում կրկին արհեստական կերպով թանգրութեան առաջացնելով նոյն ժողովրդին կեղեքեն՝ նրա ցորենը կրկին նրա վրա ծախելով, ի հարկէ, կրկնակի գնելով: Ահա այս բանի դէմ այժմից պիտի միջոցներ ձեռք առնի ազմիրստարացիան: Ա—Դո

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌԻՑ

Ճարտար գիւղ, յուլիսի 5-ին

Դարաւաղի կոնսիստորիայի նոր կազմը արդէն սկսել է իր «արհեստագէտ» գործունէութիւնը, որին ապացոյց առաջ ենք բերում հետեւեալ փաստը:

Շուշու գաւառի Գիւնէ-Ճարտար գիւղը բաղկացած է ընդամենը 260 ծխից, որոնց վրա քահանայութիւն են անում հինգ հոգի: Դրանք կան այն ողորմելի գրութիւնը, որի մէջ գաւառում են այդ հինգ քահանաները, արդէն պարզ ապացոյց է, որ ծխերի թիւը բոլորովին համապատասխան չէ քահանաների թւին: Բայց ինչ ենք տեսնում: Չը նայած այդ ակնհաս ճշմարտութեան, լուսն ենք, որ մի նոր «տօրացում» եւս տեսնալին աշխատանք է թափում վերաճանում քահանայ դասնալու: Նոյն գիւղի վրա, որտեղ կեղեքեցու պաշտօնականները իրար զլուխ են կոտրում մի հատ կոպէկի համար:

Շուշու կոնսիստորիային շատ լաւ յայտնի է այս գրութիւնը եւ այնուամենայնիւ, նա սուս ու փուս քահանայութեան նոր-նոր առաջարկութիւններ է անում Ճարտար գիւղի համար, մինչդեռ կան քանի-քանի գիւղեր, որտեղ ոչ մի քահանայ չը կայ... Եթէ գիւղի ժողովրդից հարցնէին այդ մասին, նա ոչ միայն չէր ցանկանայ նոր քահանայ, այլ եւ կը խնդրէր, որ, եթէ կարելի է, եղածների թիւը կրճատեն: Կոնսիստորիայի այդ նոր առաջարկութիւնը

լուսաւոր նպատակին հասնելու համար երկու տարվայ ընթացքում նա օրը միայն մի հայ էր ուտում եւ ուրիշ ոչինչ, լուսն ու համր էր, ոչ ոքի հետ չէր խօսում, ամբողջ օրերը անց էր կացնում ընթերցանութեան մէջ, իսկ երկրորդները ճրագ չէր վառում, օրպէս զի մտածէ կարգադրած վրա: Այդ հակադրական ջանասիրութիւնը, որ կատարեալ անձնագործութեան էր համար, վերջ ի վերջոյ օգնեց ուսումնասանել վարդապետին. նա յաղթեց դաժան արեղեքները, հասկացաւ այն, ինչ անհասկանալի էր դարձել տղիտութեան դարերում, այնպէս որ վաղեմի գիտութեան ձեռք բերած մարդ, որի համար այլ եւս գաղտնիքներ չունէին քերականութիւնը, տրամաբանութիւնը եւ ձեռքի տակ եղած փիլիսոփայական գրքերը: Մկրտիչի թէ գնաց Էջմիածին, որովհետեւ պատրաստ էր ուղարկել իր թո՛ղքները սովորեցնել ցանկացողներին այն, ինչ ձեռք էր բերել տասն եւ հինգ տարիների դաժան ճգնութեամբ: Սալաւուր վարդապետը, որ Լեւոնտանում իր տղիտութեան ապացոյցն էր ստացել, այնպիսի մարդկանցից էր, որոնց համար սովորելը երբեք ու չէ: Եւ նա Սիմէոն արեղայի հետ սկսեց դասեր առնել Մկրտիչի վարդապետից *):

Այդքան բարեխղճութիւն ունեցող մարդ չէր կարող լուսաւորութեան բարեկամ չը հանդիսանալ: Եւ Զուլայի Ամենափրկչեան վանքում Սալաւուրը հաւաքեց աշակերտներ, ամեն յարմարութիւններ ստեղծեց, որ նրանք առաջադէմ ու կրթված լինեն: Այդ դպրոցը, որ Զուլայի պատմագիրները մէկը անուանում է համալսարան, ապագայում էր աշակերտին ամեն տեսակ կողմնակի հոգսերից, տարվ նրան այն ամենը, ինչ հարկաւոր էր ապրուստի համար: Դրա փոխարէն աշակերտը պիտի նուիրվէր իր գրքերին: Սիմէոն վարդապետը Սալաւուրի աջ

*) Ճաքել պատմ., Գլ. ԳԺ.

հինված է զուտ մեքենայութիւնների եւ իւր-նաւթական կապերի վրա: Բաւական է ասել, որ կոնսիստորիայի անդամներից մէկը տիրացուի ազգագրանէ: Մի բան նոյնպէս հարկաւոր է ինչի, որը թէեւ իր տարօրինակութեամբ առասպելի է նման, բայց իսկապէս ճշմարտութիւն է: Այդ այն է, որ ինչպէս «տօրացում» ձեռնագրվում է իր հօր ծխի վրա, մինչդեռ վերջինս դեռ կենդանի է եւ բացի դրանից այդ նոյն իսկ ծխի վրա ձեռնագրվել է միւսինոյն քահանայի միւս օրդին, որը քահանայ դասնալուց յետոյ արժանի չէ համարել գիւղում մնալ եւ 4—5 տարի Շուշու թափառելուց յետոյ, մնացել է քաղաքի եկեղեցիներից մէկում, իսկ նրա տեղը այդ միջոցին գիւղում բռնել է մի ուրիշ անձնագործութիւն: Եւ այսպէս դուրս է գալիս, որ մի ծխի վրա, որ ընդամենը 50 գիւղական անից է բաղկացած, կարող են նշանակվել մէկը հայրը, իսկ երկուսը նրա օրդիքը:

Առասպել չէ, ինչ է:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 յուլիսի

«Մշակ» լրագրի այս տարվայ 81 համարում հրատարակված է, թէ Կարսի նահանգի Փալաքը վան գիւղի ժամանակաւոր բնակիչ մի գիւղական քահանայ իբր թէ սրբի տեղը փոխել է եւ ժողովրդից աջակցութիւն է ստացել: Այդ լուրը, որ վերաբերում է ինձ, սխալ է եւ զրպարտութիւն: Եւ ժողովրդից ոչ մէկ կոպէկ առած չեմ, ինչպէս յայտնի է եւ տեղական իշխանութեան, որ քննեց եւ իմացաւ ժողովրդից: Այն գոմը, որի մէջ իբր թէ սուրբն է ամփոփված, ոչ թէ Դաւոյի արևոտումն է, այլ Դէրբի Յովնանի արևոտումը: Սրա տան մէջ կայ Նուշիկ անուամբ մի աղջիկ՝ 17-ամեայ, սա շարունակ երազ է տեսնում եւ մինչեւ այժմ էլ ասում է, թէ սուրբ կայ, երբ գաւառապետը քննում էր, կրկին ասաց, թէ այստեղ երեք սրբի գերեզմաններ կան, սակայն գաւառապետը կրկին փորած տեղը լցրեց, բայց այս աղջկանից վեց հոգի եւս երազ են տեսել, իսկ ամբողջ գիւղը ասում է, թէ 30 տարի առաջ մենք գիտեցինք, որ սուրբ է եղել: Գաւառապետը վերջ գրեց գործին եւ ծածկեց քահանայ տեղը, ինչպէս առաջ ասացինք:

Ս. քահանայ Մարկոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, յուլիսի 21-ին, Թիֆլիսի Մոզնու ս. Գեորգի եկեղեցում տեղի ունեցաւ հանդուցեալ Դրիգոր Զանգեանի հոգեհանգիստը: Հոգեհանգիստը ներկայ էին հանդուցեալի իշխանալիք քաղաքի յարգըներ, եղբայրական մասնիկ Ներկայացուցիչներ, իրաւաբաններ եւ ծանօթներ: Հոգեհանգիստը կատարվեց ժամի 1-ին:

Թեւ էր. նա կրթական գործը հասցրեց նահանգի գլուխ, ինչն էլ զբաղվում էր գրաւոր աշխատութիւններով եւ չուտով հրաշակվեց ամբողջ Հայաստանի մէջ իբրեւ գիտնական վարդապետ:

Հասկանալի է, որ Ամենափրկչեան վանքի չըմանում պիտի լաւ զգացվէր տպարանի կառուցութիւնը: Եւ որովհետեւ անկեղծ ոգեւորութիւնը ընդունակ է գործ ստեղծել նոյն իսկ ոչնչից, ուստի եւ Սալաւուր վարդապետը իր օգնականներին հետ գլուխ բերեց մի այնպիսի գործ, որ աւելի հրաշք էր նման: Նա բայ առաւ Զուլայում տպարան եւ 1640 թվականին հրատարակեց «Հարանց Վարք» անունով գիրքը: Տպարան Պարսկաստանի խորքերում, այն էլ այդ խաւար ու բայաբոսական ժամանակներում—սա ինքն ըստ ինքեան մի մեծագործութիւն էր, որ պատիւ էր բերում հայի կուլտուրական ընդհանրութիւններին: Բայց հրաշալին այդ չէ, այլ այն, որ Զուլայի տպարանը ամբողջովին չինված էր անայն միջոցներից: Սալաւուր վարդապետը ոչ ոքից չէր եւ նրան չըմպատողները: Բայց նրանք կարողացան խելով ըմբռնել, թէ ինչ է պահանջվում եւ փորագրեցին ատոնը, չինեցին մասնու, մինչեւ իսկ թուղթն էլ պատրաստեցին տեղի ու տեղը, շարեցին, տպագրեցին: Ասել հարկաւոր չէ, որ այդպիսի ինքնահար միջոցներով գլուխ բերած գործը խոյր պակասութիւններ պիտի ունենար. եւ իրաւ, Զուլայի այդ անդամների տպագրութիւնը տեղի էր ու անկաստար, աշխատողների անհմտութիւնն էր յոյց տալիս:

Բայց պակասութիւնները ոչինչն այն փաստի առաջ, որ այդ բոլորը պատրաստված էր հայ մարդու ձեռքերով, Ասիայում, առանց մասնագէտ վարդապետների ցուցմունքների եւ աշխատութեան: Միայն զէպի գործն ունեցած սաս-

Թիֆլիսի երգուհայ հաւատարմատարները եւ նրանց օգնականները զիմեցին իրանց կողմից «Русскія Вѣдомости» խմբագրութեան, խնդրելով դնել նրանց անունից մի պտակ հանգուցեալ Գ. Զանգեանի զգալի վրա: Պատկեր կը դրվէն եւ «Тифлисскій Листокъ» լրագրի եւ ուրիշ յարգողների կողմից:

Մեր հայերեսակից պրոֆէսոր Ղամբարեան ընտրված է միջազգային ցուցահանդիսական դպրոցի ուսուցչի քաղաքի կարգադրիչ մասնաժողովի քարտուղար:

«Туркестанскія Вѣдомости» լրագրում կարգում ենք. «Ստացված տեղեկութիւններին նախ յետոյ խօսեալ, որ վաղուց բուն է դրել Հինդուկոստանում եւ դարձել է այնտեղ մշտապէս հիւանդութիւն, վերջին ժամանակ անցել է Աղանստան: Այն տեղեկութիւնները, որոնք հասել են այստեղ Մեյխեդի ուսուցչի հիւպատոսից եւ սահմանին մօտ ապրող բուխարացի բէկերից, հիմք են տալիս ենթադրելու, որ Կարուլում խօսեալից հիւանդանալու դէպքերը վերջին ժամանակ նշանաւոր չափեր են ստացել: Այդ դէպքերը մեծ մասամբ վերջանում են մահով: Ի նկատ առնելով այդ հանգամանքը՝ մեր կատարելութիւնը Աղանստանի սահմանի վրա ձեռնարկել է կարեւոր միջոցներ՝ խօսեալի ընթացքը դիտելու համար, որը տարածվեց հիւանդութեամբ կարող է անցնել եւ մեր սահմաններից ներս:»

Ներքին գործերի մինիստրութեան մէջ սկսել են մշակել քաղաքային դատաւարների մէջ մտցնելու փոփոխութիւնների ծրագիրը. փոփոխութիւնների գլխաւոր հիմունքներն արդէն նախագծված են: Ենթադրվում է միացնել մեջ չանների, վաճառականների եւ արհեստագործների դատաւարները եւ կազմել մի դատաւարաքաղաքային դատաւար, որի վարչութիւնը պէտք է կենտրոնացած լինի քաղաքային ինքնավարութիւնների մէջ: Նախագիծը վերջնականապէս կը մշակվի, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, 1901 թուի դարձանք:

Մեկ խնդրում են հրաւիրել հասարակութեան եւ հոգեւորականութեան ուշադրութիւնը այն փաստի վրա, որ Յովհաննէս Յովհաննիսեան մի արքայաւոր արդէն երեք օր է ինչ մեռել է եւ մինչեւ այժմ մնում է անթափ, որովհետեւ տէր չունի: Տեղեկութիւնների համար օգնել ցանկացողները կարող են գլխով Տарая Крѣпостная ул., д. № 190. Միջոց Միջազգային:

Ստացանք 1) Լեւոն Մսերեանցի «АНТИГОНА

տիկ աէրն էր կարող դրդել Սալաւուր վարդապետին եւ նրա օգնականներին յանձն առնել այդքան ծանր աշխատանք, չը յուսահատվի հաղթարաւոր դժուարութիւններից: Այս է ամեն ինչ կարեւորը:

Գրքի յիշատակարանը թողնում է ձեզ վրա գեղեցիկ տպաւորութիւն: Դուք երեւակայում էք մահմուդական աշխարհի մի հեռու անկիւնում չինած քրիստոնէական վանք. ուր սովորական ծուլութեան եւ հացկատակութեան տեղ կուտայ է գաղափարական գործունէութիւնը: Ժամանակ են, ծրագրերն են կազմված, թէ ինչպէս անեն, որ լոյս ստանայ արքայազնի ղեկավար ժողովուրդը Հայաստանում եւ ինչպէս ստեղծեն այն գործը, որ այդ լոյսն է տարածում: Հաւաքված են հոգեւորականներ եւ աշխարհականներ, ծեր ու երիտասարդ, քահանայ ու վարդապետ, աշակերտ ու վարպետ, բաժանել են աշխատանքը եւ գործում են մեծ համբերութեամբ: Անտարքեր ու անգործ չէ նոյն իսկ ծերունի խոհարար Տէր Յուսիկը, նա էլ օգնում է կղաքներին: Նախելով չըմպատող պարսկական իրականութեան, մասն բերելով, որ այդ աշխատանքներից շատերը տարինքն առաջ բռնելու համար հեռացված էին իրանց հայրենի հողից եւ արտաստեղծներով էին թրջում այն երկար ճանապարհը, որ վերջը բերեց հայոցից նրանց այստեղ, տեսնելով թէ որպիսի յոյսերով եւ քրքաբան ակնկալութիւններով են այդ մարդիկ պատում իրանց ձեռքով չինած անարուեստ, կուլտուր մոմուրի չուրջը: Գրքը լինում է քրքրանքալիս հոգեւոր պատմաբան Միլլենի, որ XIX դարի առաջին կէտից հիւանդանալով նալում էր XVI դարի վերնախիւսն մեծ տպագրիչների դաժան աշխատութիւններին եւ բայապանդում էր. «Սուրբ գործը»:

(Կը շարունակվի)

ժարվեն հաւատարմաց Թուրքի Ե-ին հրատարակված է ուրիշ հրաման, որի մէջ նկատուում է բոլորովին այլ վերաբերմունք՝ դաշնակցի զօրքերի յայլթութեան պատճառով Տեանձինում Այդ թղթի մէջ առաջին անգամ է յիշուում կէտաշէնի սպանութիւնը, որ վերագրած է աւազակներին, բայց որ, անկասկած, դիտաւորեալ էր։ Կորէս թարգմանը կարող է ապացուցանել, որ սպանութիւնը կատարված է չինացի օֆիցերի ձեռքով։ Չինացիները ակաւաւորեցին եւ կործանեցին ֆրանսական զեպանատունը։ Պիճոն զեպանը պաշարման հէնց առաջին օրից ազատվեց՝ զնալով անգլիական զեպանատունը։ Ամենամեծ վտանգ էր սպանուում հրդեհումը, որովհետեւ չինացիները կանգ չառան եւ հրդեհեցին զեպանատան կից գտնվող ակադեմիան։ Չինաստանի ամենաբարձր շինութիւնը—որտեղ գտնուում է մի եզակի գրադարան ամբողջ աշխարհում Պէյցզանի տաճարում փակված եւ քրոպայիների մասին մենք տեղեկութիւն չունենք։ Սպանված են 50 օտարազգիներ, վիրաւորված են 138-ը։ Բոլոր զեպանները եւ զեպանատաների բոլոր անդամներն իրանց ընտանիքներով անվնաս են։ Եւրօպական գաղութի ընդհանուր անսիրտական դրութիւնը բաւարար է։

ԿԱՇԻՏԱՆԻՑ։ Պրետորիայում գտնված են նըշանաւոր դոկումենտներ, զրված անգլիացիների կողմից։ Այդ դոկումենտները ստուեր են գցում պարլամենտի մի քանի անդամների եւ քաղաքական գործիչների վրա, որոնք համակրում են բոչերներին։

ՊԱՐԻԶ։ Երբ չափ զուրկ էր գալիս օտարերկրեայ միապետների պալատից, մի անյայտ մարդ, ձեռնափայտը բարձրացրած, յարձակվեց կառքի վրա եւ աղաղակեց. «Եկեցե՛ք ժողովրդի որդիները»։ Նրա մօտ գտնված է ատրճանակ, բայց նա, ըստ երեւոյթին, միտք չունէր սպանութեան փորձ անելու։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Ձիւնորական միջնաբերդը յանձնարարեց գնեցնել Վաֆֆին գործի միատեղ չինական զօրքերի հետ, եթէ նըշանը սկսեն ճնշել ապստամբներին։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Տեանձինից ստացված հեռագիրը հաղորդում է, թէ եւպոնական առաջապահ զուեղը ջարդված է եւ քորցրել է 150 մարդ, թէ սպանված են թէ վիրաւորված։ Ռուսները վերցրին այն մարտիկները, որոնք գտնվում են Պեկինի ճանապարհին, Տեանձինից 10 մղոն հեռու։ 10,000 մարդուց բաղկացած բերդապահ զօրքերը փախան։

21 յուլիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գործկեովի հեռագիրը յուլիսի 19-ից, «Յուլիսի 14-ին գնեցնել Սախարով հրաւէր ուղարկեց Սան-Սինի ֆուդուտի-նին բանակցելու, բայց նա չը պատասխանեց այն ժամանակ, 14-ի երեկոյան, զօրքերը դիք բռնեցին Սան-Սինի հիւսիսարեւմտեան կողմի դէմ եւ 15-ին ուղարկուեցին Սան-Սինը առաւօտից ի վեր, իսկ կէսօրին հետեւակ զօրքը եւ կօզակները լողալով անցան հեղեղաւոր մինչեւ կոկորդիները չլինէին, յարձակում գործեցին քաղաքի վրա եւ բոլոր կէտերից զուրկ մեղցին թշնամուում։ Չինացիները փախան, թողնելով թնդանօթները, բազմաթիւ հրացաններ եւ մեծ քանակութեամբ ռազմամթերք։ անվնաս են 22 թնդանօթ, որոնց թուում 14 Գօշկա Չինացիները, թուով 4,000, կորցրին բազմաթիւ մարդիկ։ Բնակիչները, գրեթէ բոլորը, փախան։ մեր զօրքերը իրանց պահում էին փայլուն կերպով եւ իրանց հցում էին կուր թուեղ տեղը։ Մեր կորուստները չնչին են։

ԼՕՆԴՕՆ։ Համախնդրեթ ժողովի Բրոքրիկ աւում է, թէ բրիտանական կառավարութիւնը յայտնեց բելգիական կառավարութեան, որ Սիւպիդոյի դատի հետեւանքը նա համարում է չարաբաստիկ սխալ արդարադատութեան։ Ցաւով եւ զարմանքով իմացաւ նա, որ բելգիական կառավարութիւնը միջոցներ ձեռք չէ առել կալանաւորելու Սիւպիդոյին, մինչեւ որ վճիռ կայանար դատավճռի առթիւ։ Բելգիական կառավարութիւնը զեռ պատասխան չէ տուել։

ՏԵԱՆԶԻՆ։ Յուլիսի 14-ին գնեցնել Գեղի ստանձնեց բրիտանական զօրքերի հրամանատարութիւնը։

ՊԱՐԻԶ։ Շահի հետ պատահած արկածի մանրամասնութիւնները, ինչ որ մի մարդ, բանուորի հազուադէպ, յանկարծ ձիցը ոտտրկանների շղթան եւ ուղեց կանգնել կառքի ստատեղի վրա, ուղղելով ընկողնէր չափի վրա։ Մեծ վիզերին աջողեց խել զենքը չարազործի ձեռքից այն ժամանակ, երբ ոտտրկանները բռնեցին նրան։ Ոտտրկանները հագիւ ազատեցին նրան ամբողջ ձեռքից։ Ոտտրկանատուն տարվելուց յետոյ, հարց ու փորձին նա պատասխանեց,

«այդ իմ խղճի բանն է», իսկ յետոյ ցաւ յայտնեց, որ փորձը անաջող անցաւ։ Ընկողնէրը հինգ հարուածեան էր։

ՊԱՐԻԶ։ Այն մարդը, որ փորձեց սպանել Շահին, խիստ հարուստ արտասանութիւն ունի, բայց չեն կարծում, որ նա իտալացի լինի։ Նրա մօտ ընդամենը 2 ֆրակ կար։ Պատուում են, թէ մի քաղց օտարազգի թագաւորների պալատից դուրս գնալուց առաջ, չափին յանձնել են մի նամակ, ստորագրված իտալական վերջաւորութիւն ունեցող անունով, գրված իբր նէպոլում, բայց ուղարկված Պարիզի քաղաքային պատմով։ Նամակը նախագրուած էր չափին սպանութեան վերահաս փորձից, բայց չափը նշանակութիւն չը տուեց նրան եւ յանձնեց ոտտրկանական գործակալին։

ՄՕՆՑԱ։ Թագաւորը մի հրամագրով հաստատեց այժմեան միջնաբերդիւնը։ Միջնաբերդը երբեք չէ տուել։

ԼՕՆԴՕՆ։ Պատգամաւորների ժողովի Բրոքրիկ պատասխանելով մի հարցի, պնդում է, թէ այն հողային զիջումը, որ ստացել է Ռուսաստանը Կորէայից, բոլորովին կախված էր Կորէայից եւ չէ դիպում միջազգային արտօնութիւններին։ Բրիտանական կառավարութիւնը հիմք չունէր միջամտութիւն գործելու։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ-ՔԱԼԱՆՔՍԻ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շարժ օրերը լինելու են ընտանեկան երեկոյթներ։ Մանկական երեկոյթներն այլ եւս տեղի չեն ունենալու մինչեւ նոր կարգադրութիւն անելն այդ մասին։

ТРЕБУЙТЕ
ВЕСДЪ
КАКАО
C.С.И.У.Н.К.
МОСКВА.

Դ Պ Ր Ո Յ
տիկ. Կառ. Հիսիցեանցի

Երկու սեռի մանուկները հասար միատեղ պարագմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բնիւթեան փողոց (նախկին Սաղօվայա), սեռ. տ. № 29)։ (հ.շ.) 8—25

ՆԿԱՐԻՉ ԲԱԺԻՆՋԱՂԵԱՆԻ

ԱՐՀԵՍՏԱՆՈՅԸ ՊԱՐԻԶՈՒՄ
Բայ է հասարակութեան համար ամեն օր, առաւօտեան ժամի 10-ից մինչեւ 2-ը կէսօրից յետոյ։ Boulevard Montparnasse, 132.

Հ Ր Ա Ի Է Ր
ՀՈՍՀՈՍԻ ԶԵՆՈՍԵՏՐԸ

Պարոնեանի, բ. տպագր. (հեղինակի պատկերով) ԳԻՆԵ Է 1 րուրի։
Դիմել—Տիֆլիս, Կոնտոր Общества Издаия Армјанскихъ книгъ (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Societe de la publication des livres armeniens. Բնիւթեան անգամ լինելու համար վճարում են տարեկան 6 րուրի եւ ստանում 8 րուրի գրքեր։ Բնիւթեան գրասենական վճարում են ընկերութեան գրքերը։ Ցանկացողներին ձրի ուղարկում է գրացուցակ։

Հ Ր Ա Ի Է Ր

Հրեշտակապետաց եկեղեցու հին երէցփոխ Դարչո Միքայելեանցի մահվան պատճառով լինելու է յիշեալ եկեղեցու նոր երէցփոխի ընտրութիւն այս ամսի 23-ին, առաջիկայ կիրակի օրը, 12 ժամին. ուստի յիշեալ եկեղեցու բարեպաշտ ծխականները հրաւիրվում են որոշեալ ժամին ներկայ լինել յիշեալ եկեղեցում նոր երէցփոխ ընտրելու համար։
Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի 3—3 Զաքարիա քահ. Զարդեղեանց

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍԵԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց եւ պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ա տ տ ե ս տ ա տ ն եր։
Աւանդելի առարկայք որոնք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային), 4) Թուարանութիւն համրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական եւ մուրհակի կաշնուագրութիւն եւ 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, եւ երեկոյան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր հիմնովի բնակարանում, Սպրալում, Ալեքսանդր Փրիզօնովի տանը № 9, Սերգիեվսկայա եւ Լեւոնտովսկայա փողոցների անկիւնում։ Մրադիրը եւ կանոնները կարելի է տեսնել ձրի աղէ ս երը։ Մովիւնօթիւնների բանկային գրասենականում եւ կուրսեր հիմնովի բնակարանում։ Օտարաբարձարացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянц, (չ. չ. 9—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS V. PAQUET ET C-ie
ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 2/15 օգոստոսի ԱՆԱՏՈԼԻ չորեքշաբթի, նաւապետ ԲԻՆԱԿԻՆԻ, Եւ ապա չորեքշաբթի, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի Եւ Անտեդրպէնի մէջ, ընդունելով պարանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԴԱՐՆՈՅԻՆ, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Ս. Գ. Բարեկնանեանին, Սիմոն փող. Ոթմարտուխովի եւ Մայսուրաձէի քաղաքապետար։ ԲԱԳՈՒ—Եղը, Վ. եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՕՎՕՐՈՍՍՈՒՅՍԿ—Վաղրիակապի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (հ. չ. չ.) 10—20

Ուղարկվեց բաժանորդներին
«ՁԵՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՑԷՆ»
I մաս

Կիլիկիայի քարտէզով, Ձէյթունի յատակագծով, Ձէյթունի տեսարանով եւ զէյթունի կտրիճի պատկերով։

Գինը 1 ր. 50 Կ. կամ 3 ֆրանկ 75 ս.

Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ, Центральная книжная торговля, իսկ արտասահմանից՝ Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII/3, Mechitharistengasse 4. 2—10

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

Տարույս սեպտեմբերին լինելու է Ներսիսեան հոգեւոր գաղղիցի համար հոգաբարձուների ընտրութիւն, ուստի պատիւ ունեւ յայտնել Թիֆլիսի բ. մասի պ.պ. ծխականներին, որ իւրաքանչիւր տան միմայն աւագադոնը, որի տարիքը 25-ից պակաս չէ, եթէ մոռացմամբ անուներ չէ գրել տուել իր ծխատէր քահանայի ցուցակում թող չապաէ գրել տալ մինչեւ օգոստոսի մէկը։

Գործակալ բ. մասի Թիֆլիսի՝ 5—6 (շ) Գրիգոր քահ. Մանգալունի

Ֆիւնանսների միւնիստրի թոյլտուրեաւր
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку, Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ա տ տ ե ս տ ա տ ն եր։
Աւանդելի առարկայք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Հաշուապահութիւն՝ արդիւնարեւական-գործարանական, առեւտրական եւ բանկային, 3) Առեւտրական թղթակցութիւն, 4) Առեւտրական անտեսագիտութիւն, 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ, 6) Գեղագրութիւն եւ առաւագրութիւն (ուղղումն ձեռագրի)։
Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ եղը. Մովիւնեան եւ ընկ. ԲԱԳՈՒՄԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում են ուղարկում են ձրիաւ։ Օտարաբարձարացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (հ. չ.) 8—25

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՎՆԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առեւտրական եւ գործարանական հաշուապահութեան ՌԵՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, եւ եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔԻ ԱՌԱՎԱՆԵՐԻՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնարեւական եւ կերտիլի գործարանական հաշուեկետութեան։

Բ) Առեւտրական թուարանութիւն։

Գ) Առեւտրական նամակագրութիւն։

Դ) Գեղագրութիւն եւ ամենապատ ձեռքերի ուղղելը։

Պարագմունքներ սկսվելու են 1900 թ.ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, եւ պարբերաբար չարունակվելու են իւրաքանչիւր 20ՐՍ ամսից յետոյ, իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարագմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան, ՆՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, եւ Ռուսաստանի բոլոր յայտնի գրաւաճառանոցներում։ ԳԻՆԵ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաբարձարացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։

10—30